ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

«Քաղաքապետերի դաշնագիրը” Հայաստանի Հանրապետությունում

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԵԼ Է՝

Եվրոպական հանձնաժողովի էներգետիկայի գլխավոր տնօրինության (այսուհետև՝ ԳՏ ԷՆԵՐՋԻ), Ռյու դե Մոտ 24, BE-1040 Բրյուսել, Բելգիա, ի դեմս պարոն Կլաուս-Դիտեր Բորխարդի, ներքին էներգետիկ շուկայի գծով տնօրենի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջև (այսուհետև՝ Նախարարություն), Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2, ի դեմս պարոն Դավիթ Լոքյանի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի միջև:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ.

Եվրոպական հանձնաժողովը մեկնարկեց «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությունը 2008թ.: Նախաձեռնությունը բաց է Եվրոպայի բոլոր քաղաքների և քաղաքապետարանների համար և նպատակ ունի ներգրավել տեղական իշխանություններին և քաղաքացիներին Եվրոպական Միության էներգետիկ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում: Դաշնագիրը կազմված է ստորագրող քաղաքների պարտավորությունից ընդառաջել ԵՄ-ի նպատակներին, որոնք ուղղված են CO_2 արտանետումների կրճատմանը՝ էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման և կայուն քաղաքային տրանսպորտի քաղաքականության խթնամնա միջոցով:

Եվրոպական հանձնաժողովը ճանաչում է Դաշնագրի ազգային համակարգող կազմակերպություններին որպես իր հիմնական դաշնակիցներ՝ Դաշնագրի խնդիրների կարևորության մասին տեղեկատվության տարածման և նախաձեռնության ազդեցության ավելացման գործում: Ազգային համակարգողները հանդես են գալիս որպես ազգային իշխանություններ, որոնք ի զորու են ռազմավարական ուղղորդում և տեխնիկական աջակցություն տրամադրել այն քաղաքապետարաններին, որոնք ունեն «Քաղաքապետերի դաշնագիրը» ստորագրելու քաղաքական կամք, սակայն չունեն դրա պահանջների բավարարման համար անհրաժեշտ հմտություններ և/կամ միջոցներ, մասնավորապես, Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի պատրաստման, ընդունման և իրականացման համար:

Նախարարության հիմնական նպատակների շարքում քաղաքապետարանների հետ համագործակցությունն է՝ վերջիններիս քաղաքականությունների և կառավարման ծրագրերի մշակման գործում:

Covenant of Mayors
Committed to local sustainable energy

Մեկնարկի պահից Նախարարությունը շատ դրական է վերաբերվել «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը և դրա հնարավոր արդյունքներին և, այդ իսկ պատճառով, որոշել է ամրապնդել իր աջակցությունը «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը Հայաստանի համայնքներում, ինչպես նաև աջակցել այն քաղաքապետարաններին, որոնք որոշել են պաշտոնապես ձևակերպել Դաշնագրի ներքո իրենց պարտականությունը: Այս նպատակին հասնելու համար Նախարարությունը նախատեսում է սկսել տեղական համայնքների ավագանիների աջակցման հատուկ ծրագիր՝ «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանն համայնքների անդամակցելու համար, որն, ի թիվս այլոց, ներառում է նաև քաղաքապետարանների մակարդակով Կայուն էներգետիկ զարգացման ծրագրերի պատրաստումը:

ՍՈՒՅՆՈՎ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

I

ԳՏ ԷՆԵՐՋԻ-ն հրապարակավ ճանաչում է Նախարարությանը որպես Դաշնագրի հիմնական դերակատար՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական իշխանությունների համար Դաշնագրի ազգային համակարգող:

II

Նախարարությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

ա) Քաղաքապետարանների շրջանում խթանել «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանն անդամակցումը:

բ) Տրամադրել և/կամ ապահովել ֆինանսավորման հասանելիությունը քաղաքապետարանների համար՝ Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի պատրաստման և իրականացման համար, ներառյալ անհրաժեշտ ծառայությունների համար պայմանագրերի կնքումն ու կառավարումը և ծրագրերի իրականացումը:

գ) Տրամադրել տեխնիկական աջակցություն Դաշնագրի ներքո քաղաքների կողմից իրականացվելիք իրազեկության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների (օրինակ՝ Էներգիայի օրերի) կազմակերպման գործում:

դ) Իրավասության սահմաններում համագործակցել Դաշնագրի ազգային և տարածքային բոլոր Համակարգողների և Աջակիցների հետ:

ե) Պարբերաբար զեկուցել Եվրոպական Միության հանձնաժողովի ԳՏ ԷՆԵՐՋԻ-ն Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված արդյունքների վերաբերյալ և մասնակցել Եվրահանձնաժողովի կողմից առաջարկվող Դաշնագրի ռազմավարական իրականացման վերաբերյալ քննարկումներին:

III

Իր հերթին, ԳՏ ԷՆԵՐՋԻ-ն պարտավորվում է.

ա) Ապահովել Նախարարության կողմից ձեռնարկված նախաձեռնությունների տեսանելիությունը (օրինակ՝ «Քաղաքապետերի դաշնագրի» նախաձեռնության ինտերնետային կայքում առցանց պրոֆիլի, առցանց նորությունների, օրինակելի փորձի տեղադրման կամ գովազդային նյութերի կամ միջոցառումների միջոցով):

բ) Ընդհանուր նպատակներին հասնելու համար փոխանակել և քննարկել առկա տեղեկատվությունը:

գ) Տեղեկացնել Դաշնագրի գործընթացի նոր զարգացումների վերաբերյալ:

IV

Սույն համաձայնագիրը չի ենթադրում որևէ իրավական և/կամ բյուջետային պարտավորություն Հանձնաժողովի և Նախարարության միջև:

Նախարարությունը ընդունում է, որ Քաղաքապետերի Դաշնագիրը չի կարող ծառայել որևէ առևտրային նպատակներին:

Սույն համաձայնագիրը պետք է ավտոմատ կերպով վերականգնվի (ուժի մեջ մնա) յուրաքանչյուր տարի, եթե այլ որոշում չկայացվի համաձայնագրի որևէ կողմի նախաձեռնությամբ:

Սույն համաձայնագրում ամփոփված նպատակներին հասնելու համար կողմերը պետք է փոխշահավետ համագործակցեն և աշխատեն միասին հավասար պայմաններում: Եթե ապացուցվի, որ սույն համաձայնագրի որևէ դրույթ կամ դրույթներ անիրագործելի են, ապա կողմերը պետք է համաձայնվեն պատրաստել նոր այլընտրանքային տարբերակներ, որոնք կնպաստեն Դաշնագրի նպատակներին:

Սույն համաձայնագիրը ստորագրված է երկու բնօրինակով և թարգմանված երկու լեզուներով (անգլերեն և հայերեն): Սույնով կողմերը համաձայնվում են, որ երկու տարբերակների միջև մեկնաբանության ցանկացած տարբերության դեպքում անգլերեն տարբերակը ցանկացած դեպքում կհամարվի գերակայող:

Եվրոպական հանձնաժողով էներգետիկայի գլխավոր տնօրինություն	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Կլաուս-Դիտեր Բորխարդի Ներքին Էներգետիկ շուկայի գծով տնօրեն	Գագիկ Լոքյան Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար

Covenant of Mayors
Committed to local sustainable energy